

Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքից, հենվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ազատ կամքի վրա, որ արտահայտվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրապետական հանրաքվեի արդյունքներում՝

-գիտակցելով պատմական հայրենիքի ճակատագրի հանդեպ տածվող պատասխանատվությունը,

-հավատարմություն հայտնելով այն սկզբունքներին, որ բովանդակում է 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղը Հանրապետություն հայտարարելու մասին Հռչակագիրը,

-ձգտելով կարգավորել հայ և ադրբեջանական ժողովրդների հարաբերությունները,

-կամենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը պաշտպանել դրսի հարձակումներից և ֆիզիկական ոչնչացումից,

-զարգացնելով Լեռնային Ղարաբաղի 1918-1920 թվականների անկախ, ժողովրդական ինքնակառավարման փորձը,

-արտահայտելով բոլոր պետությունների և պետությունների ընկերակցությունների հետ իրավահավասար և փոխշահավետ հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն,

-հետևելով մարդու իրավունքների Համաընդհանուր հռչակագրի, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի անվտանգության ու համագործակցության համաեվրոպական խորհրդակցության անդամ երկրների Վիեննաի հանդիպմանը կնքած եզրափակիչ փաստաթղթերի և միջազգային իրավունքի համաընդհանուր ճանաչման արժանացած մյուս նորմերի սկզբունքներին և հարգելով դրանք,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ հռչակված պետականությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անկախ պետություն է, ունի իր պետական դրոշը, զինանշանը, օրհներգը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, ինչպես նաև միջազգային իրավական այն փաստաթղթերը, որոնք կարգավորում են մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդին, որն իր իշխանությունն ու կամքը իրականացնում է

համաժողովրդական հանրաքվերի կամ էլ ներկայացուցչական ընտրական մարմինների միջոցով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր բնակիչները հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թույլատրվում է երկակի քաղաքացիություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակիչները գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության տակ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը երաշխավորում է իր բոլոր քաղաքացիների քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները՝ անկախ նրանց ազգային, ռասայական պատկանելիությունից և դավանանքից:

Իր քաղաքացիների պաշտպանության և բնակչության անվտանգության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծվում են իշխանության բարձրագույն մարմինների ենթակա զինված ուժեր, հասարակական կարգի պահպանության և պետական անվտանգության մարմիններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները զինվորական ծառայություն են կատարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում: Ուրիշ պետությունների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող այլ պետությունների զինված ուժերի թվաքանակի կազմում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների զինվորական ծառայության անցկացումը իրականացվում է ըստ միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իրականացնում է արտաքին անկախ քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

Հողը, ընդերքը, ջրային և օդային տարածությունները բնական, նյութական և հոգևոր հարստությունները հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի սեփականությունը: Դրանք օգտագործելու և տիրանալու կարգը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը հիմնվում է սեփականության բոլոր, իրավահավասար ձևերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր քաղաքացիների տնտեսական կյանքի լիարժեք և ազատ մասնակցելու հավասար հնարավորություններ տրվելու սկզբունքների վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու իրավունքի գերակայությունը, երաշխավորում է խոսքի, խղճի, քաղաքական ու հասարակական գործունեության և միջազգային ընկերակցության կողմից ճանաչված բոլոր քաղաքացիական իրավունքների ապահովումը: Ազգային փաթրամասնությունները գտնվում են պետության պաշտպանության տակ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառուցվածքը կոչված է ստեղծել ազգային փաթրամասնությունները հանրապետության քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքին լիարժեք մասնակցելու հնարավորություն: Ազգային,

ռասայական և կրոնական բնույթի ամեն տեսակի խտրականություն հետապնդվում է օրենքով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է ազգային փառամասնության լեզուն, առանց որևէ սահմանափակման, տնտեսական, մշակութային և կրթական ոլորտներում օգտագործելու իրավունքը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և օրենսդրության հիմք են ծառայում Լեռնային Ղարաբաղը Հանրապետություն հայտարարելու Հռչակագիրը և Մարդու իրավունքների հռչակագիրը:

6 հունվար 1992 թվականի
քաղաք Ստեփանակերտ

